Արցախահայության պաշտպանության կոմիտեի այցը Փարիզի խորհրդային դեսպանատուն

Փարիզի հայոց առաջնորդարանից երեկ տեղեկացրին, որ մայիսի 6-ին, ժամը 17-ին, Արցախահայության պաշտպանության հնգանդամ կոմիտեի անդամները՝ Հայր Ներսեհ Փաքաճյան, վերապատվելի Ռոբեն Լեւոնյան, Կարապետ Քեհեյան, Զորջ Սարյան եւ Հակոբ Պալյան, ընդունվել են Ֆրանսիայում Խ.Միության դեսպանի պաշտոնակատար Կրիվոնոգովի կողմից. դեսպանը գտնվում էր Մոսկվայում՝ Միտերան-Գորբաչով հանդիպման առիթով:

Հստակ ու ճշգրիտ տվյալներով, պատվիրակությունը արտահայտել է Ֆրանսիայի բովանդակ հայության խոր մտահոգությունը Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերում, ինչպես նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակի շուրջ:

Պատվիրակությունը - իր զարմանքն ու ընդվզումն է արտահայտել հայ ազգաբնակչության խորհրդային ներքին գործոց նախարարության զորքերի վայրագ ագրեսիայի նկատմամբ:

Իր հերթին, դեսպանորդն իր «հասկացողությունն» է արտահայտել ֆրանսահայության զգացմունքների նկատմամբ, խոստանալով Մոսկվա՝ կենտրոնական իշխանությանը փոխանցել պատվիրակության կողմից իրեն հանձնված բողոքագիրը:

Ֆրանսահայ պատվիրակությունն իր հարցումների պատասխանին է սպասում:

Դեսպանորդի հետ պայմանավորվածություն է կայացել հանդիպելու դեսպանին, Փարիզ վերադառնալուց հետո: